# ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ ԳԵՐ. Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ ԳԵՐԱՊԱՏԻՒ Տ. ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՒՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Մխիթարական է Մեզ համար, Սահակ Սրբազան, Ձեզ տեսնել ներկայի մեր բարձրաստիճան հոգևորականության հույլին մեջ: Դուք Ձեր ամբողջ կյանքը նվիրեր եք լուսակրոն մեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվույն, նախ իբրև քահանա և ապա իբրև կուսակրոն միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Ավելի քան կես դար Դուք Ձեր ուժերը ի սպաս եք դրեր Մեր Ս. Եկեղեցվո շինության և պայծառության սրբազան գործին՝ Ձեր գրչով, Ձեր կենդանի խոսքով և գործերով. մխիթարեր ու լուսավորեր եք հավատացյալները և ռուսերեն լեզվով հրատարակություններով ծանոթացուցեր ու լայն շրջաններու մեջ տարածեր եք փառքը մեր բազմադարյան Եկեղեցվո վարդապետության, մշակութային արժեքներուն և հերոսական պատմության: Մեր բազմաչարչար ժողովրդի գլխուն պայթած չարաբաստիկ աղետներու ծանր տարիներուն՝ 1914—1920 թվականներուն, Դուք, իբրև Հայ Եկեղեցվո անձնդիր սպասավոր և իբրև քաջ հովիվ, աշխատեր եք ժողովրդի կարիքներու և հոգերու դարմանման համար, ըլլալով գործոն անդամ բազմաթիվ ազգային-հասարակական մարմիններու:

Այժմ ևս, հակառակ Ձեր պատկառելի տարիքին, նույն եռանդով ու խանդավառությամբ կշարունակեք Ձեր եկեղեցանվեր գործունեությունը որպես Մայր Տաճարի լուսարարապետ և Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ:

Այժմ Դուք կհանդիսանաք Մեր թանկագին գործակիցը և լավագույնս կկատարեք Ձեր վրա դրված հոգևոր և վարչական պարտականությունները՝ ի փառս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Ի վարձատրություն Ձեր աստվածահաճո և եկեղեցանվեր գործունեության և ի մխիթարություն Ձեզ, Հայրապետական Մեր այս կոնդակով կշնորհենք Ձեզ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ և կմաղթենք, որ այս բարձր կոչումը ավելցնե նոր փայլ ու հեղինակություն Ձեր անվան վրա, տալով Ձերդ Գերաշնորհութեան գործունեության նոր մղում, ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո և հուրախություն մեր հավատացյալ ժողովրդյան:

Կօրհնենք զՁեզ և կաղոթենք, որ մեր Երկնավոր Հայրը պարգևե Ձեզ երկար տարիներ՝ աշխատանքի պտղառատ և փառազարդ ճանապարհի վրա:

«Ողջ լերուք, զօրացեալ ի Հոգւոյն Սրբոյ և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն»:

ՎԱԶԳԷՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 7-ն նոյեմբերի
1956 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԶ.
ի Ս. Էջմիածին: